

ՎԱՀԱՆ ԲԱԴԴԱՍԱՐՅԱՆ

Եվրոպական կրթական տարածաշրջանային
ակադեմիայի իրավագիտության ամբիոնի ասպիրանտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

Հոդվածը նվիրված է Հայաստանի Հանրապետությունում պրոբացիոն ծառայության ներդրմանը, հայեցակարգային մոտեցումներին, հանրային-իրավական և սոցիալ-քաղաքական նշանակությանը, ինչպես նաև նրա արդյունավետությանը որպես այլընտրանքային պատժի տեսակին, պրոբացիայի ենթակա և պրոբացիային առնչվող անձանց իրավունքներին ու ազատություններին, իչպես նաև ծառայության համադրմանը Հայաստանի Հանրապետության օրենսդրական համակարգի հետ:

Հիմնաբաներ- պրոբացիա, պրոբացիայի ծառայող, պրոբացիայի ծառայություն, իրավական կարգավիճակ, պրոբացիային առնչվող անձ:

Պրոբացիայի ծառայության ներդրումը Հայաստանի Հանրապետությունում ունի առանցքային հանրային-իրավական և սոցիալ-քաղաքական նշանակություն: Այն կոչված է ոչ միայն ներդնել այլընտրանքային պատիժների ժամանակակից փիլիսոփայությանը համահունչ մի համակարգ, այլ նաև նպաստել մարդու և քաղաքացու իրավունքների պաշտպանության երաշխավորման գաղափարախոսությունից բխող պատժի կրման արդար և արդյունավետ կառուցակարգերի ներդրմանը:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի ապրիլի 30-ի N19 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել Հայաստանի Հանրապետությունում պրոբացիոն ծառայության ներդրման հայեցակարգը (այսուհետ՝ Հայեցակարգ)՝ ելնելով վերականգնողական արդարադատության սկզբունքների իրացման և ազատագրկմանն այլընտրանքային միջոցներով պատժի նպատակներին հասնելու անհրաժեշտությունից:

Միաժամանակ, անհրաժեշտ է նկատել, որ պրոբացիայի ծառայության ստեղծումը նախատեսված է նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի մայիսի 19-ի թիվ 511-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության ծրագրով: Բացի այդ, Հայաստանի Հանրապետության Նախագահի 2012 թվականի հունիսի 30-ի «Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» թիվ ՆԿ-96-Ա կարգադրությամբ հաստատված միջոցառումների ցանկով քրեական արդարադատության և քրեական պատիժների համակարգի արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների առաջնայնություններից դիտարկվեց Հայաս-

տանի Հանրապետության արդարադատության նախարարության ենթակայությամբ պրոբացիայի պետական ծառայության ստեղծումը:

Վերլուծելով պրոբացիայի ծառայության դերն ու նշանակությունը վերականգնողական արդարադատության համակարգային ամբողջականության մեջ, ինչպես նաև այդ ինստիտուտի զարգացումների պատմական ընթացքը, հիմնական առանձնահատկություններն ու առկա հիմնախնդիրները, հարկ է նկատել, որ քրեական վերականգնողական արդարադատությունը գրեթե բոլոր զարգացած ու զարգացող երկրներում միտված է հանցագործություններին ավելի ճկուն միջոցներով հակազդմանը, ինչը ենթադրում է արդարադատության համակարգի նկատմամբ հասարակության վստահության ամրապնդմանը:

Դա է վկայում ՄԱԿ-ի փորձագետների կողմից քրեական վերականգնողական արդարադատության սկզբունքները ներդրած պետությունների փորձի ուսումնասիրությունը, ըստ որի՝ այդ պետություններում վերականգնողական ծրագրերի իրականացման առաքելությունը վերապահված է պրոբացիայի ծառայություններին, որոնց գործունեության հիմքում դրվել է հասարակությունում անձի վերասոցիալականացման գաղափարախոսությունը:

Թերևս փաստ է, որ Հայաստանի Հանրապետությունում հետազոտման առարկա ոլորտի բարեփոխումները ևս պետք է պայմանավորված լինեն ազատությունից զրկման այլընտրանքային հարկադրանքի միջոցների ներդրման ռազմավարության սահմանման անհրաժեշտությամբ և դրանով պայմանավորված քրեական պատասխանատվության ու հարկադրանքի այլ արդյունավետ միջոցների կիրառումն ապահովող համարժեք պետական ծառայության վերաբերյալ արդեն իսկ մշակված եվրոպական միասնական իրավական չափո-

րոշիչների առկայությամբ²:

Ընդհանուր առմամբ պրոբացիան ընկալվում է որպես վերականգնողական արդարադատության ծրագիր, ինչի շրջանակում հանցանք կատարած անձը ազատությունից չի զրկվում, սակայն կրում է համապատասխան պատիժ, ինչը կնպաստի քրեական արդարադատության առջև դրված նպատակներն ավելի դյուրին և պետության համար ավելի նվազ բյուջետային միջոցներով իրականացմանը:

Այս առումով Հայաստանի Հանրապետությունում իրականացվող իրավական բարեփոխումները պետք է ենթադրեն ազատագրված ավանդական գաղափարախոսությունից անցում վերասոցիալականացման և վերականգնողական արդարադատությանը, որի էության հիմքում ընկած է ազատագրվումն այլընտրանքային պատժատեսակով սահմանելու գաղափարախոսությունը: Իսկ դա կենթադրի այդ գործընթացի պետական կառավարման իրականացման անհրաժեշտություն՝ պրոբացիայի համապատասխան ծառայության ներգրավմամբ:

Հայեցակարգի մեկ այլ տրամաբանությամբ Հայաստանի Հանրապետությունում պրոբացիայի ծառայության ներդրումը պայմանավորված է քրեական արդարադատության ոլորտում եվրոպական իրավական միասնական չափորոշիչների մշակման ու ներդրման անհրաժեշտությամբ: Խոսքն, առաջին հերթին, վերաբերում է մարդու իրավունքների և ազատությունների գերակայության ու դրանց արդյունավետ պաշտպանության երաշխավորմանը, ինչն ենթադրում է այդ գաղափարախոսության և արժեքային համակարգի տրամաբանությանը համապատասխան, առանց ազատագրվման, այլընտրանքային պետական հարկադրանքի այլ միջոցների կիրառում:

Հայեցակարգի դրույթների համակարգային վերլուծությունից հետևում է, որ Հայաստանի Հանրապետությունում պրոբացիայի ծառայության ներդրման հիմքում դրված են եվրոպական հանձնարարականով նախանշված գրեթե բոլոր հիմնարար սկզբունքները: Մասնավորապես, խոսքը վերաբերում է՝ ա) կրկնահանցագործության կրճատելու նպատակին ուղղված գործունեության իրականացմանը, այդ թվում՝ հանցագործություն կատարած անձանց վերասոցիալականացմանն ուղղված ծրագրեր մշակելու և դրանցում նրանց ներգրավածության (զբաղվածություն, ուսումնական գործընթացներ և այլն) հետ կապված խնդիրները լուծելու միջոցով, բ) հանցագործություն կատարած անձանց և հանցագործությունից տուժած անձանց իրավունքների հարգմանը, գ) այդ ծառայության իրականացման ժամանակ որևէ ձևի խտրականության բացառմանը, դ) պրոբացիայի ծառայության

իրավական կարգավիճակի առանձին տարրերի (խնդիրները, լիազորությունները, պետական այլ մարմինների հետ փոխհարաբերությունների շրջանակը և այլն) բացառապես օրենսդրությամբ կարգավորմանը, ե) այդ ծառայության նկատմամբ վարչական վերահսկելիության երաշխավորմանը և այլին:

Հենց այս սկզբունքներով պայմանավորված՝ Հայեցակարգով առաջադրվել է պրոբացիայի ծառայության հիմնական նպատակը. այն է՝ հանցագործությունների նվազեցում, որի ապահովումը պետք է երաշխավորվի հանցանք կատարած անձանց վերահսկելու, ուղղորդելու ու աջակցելու միջոցով նրանց արդյունավետ վերասոցիալականացմանը, հասարակության անվտանգությանը և արդարադատության իրականացմանը նպաստելը:

Միաժամանակ, պրոբացիայի ծառայության սկզբունքների ու նպատակի համատեքստում Հայեցակարգով սահմանվել են այդ ծառայության հիմնական խնդիրները: Դրանք են՝ ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների կատարում, հանցանք կատարած անձի վերասոցիալականացում, հանցանք կատարած անձի կողմից նոր հանցագործությունների կատարման հավանականությունը նվազեցնելու միջոցով հասարակության անվտանգության ապահովում և այլն:

Սակայն, անհրաժեշտ է նկատել, որ Եվրոպայի խորհրդի անդամ-պետություններին ուղղված՝ Նախարարների կոմիտեի CM/Rec(2010)1 «Պրոբացիայի մասին Եվրոպայի խորհրդի կանոնների վերաբերյալ» հանձնարարականի համաձայն՝ պրոբացիան հանցագործություն կատարած անձի նկատմամբ հասարակության մեջ օրենքով սահմանված կարգով նշանակված պատիժների ու միջոցառումների իրականացումն է, որը պարունակում է հսկողության, խորհրդատվության և օգնության տարրեր ու գործողություններ և որի նպատակն է նպաստել անձի սոցիալական վերաինտեգրմանն ու հասարակության անվտանգությանը:

Նույն հանձնարարականի մեկնաբանությունների համատեքստում պրոբացիայի ծառայությունը գործում է որպես քրեական արդարադատության համակարգի մաս, որի նպատակը, ըստ էության, հանցագործություն կատարած անձանց հետ աշխատելու և օրինապահ վարքագիծ խթանելու միջոցով նրանց աստիճանական վերաինտեգրումն է լիարժեք հասարակության մեջ, ինչը հնարավոր է իրագործել համապատասխան պայմաններ ստեղծելու, նրանց կարողությունները զարգացնելու և օրինապահ վարքագիծ ցուցաբերելու, մոտիվացնելու միջոցով: Այսինքն, պրոբացիայի ծառայության հիմնական և կենտրոնական նպատակը, ըստ եվրոպական կանոնների, հանցագործություն կատարած անձանց սոցիալական վերաին-

տեգրումն է, որն իր հերթին պետք է նպաստի հան-
ցագործությունների նվազմանը:

Ակնհայտ է, որ Եվրոպական կանոնների և Հա-
յեցակարգային դրույթների համադրված վերլուծու-
թյան արդյունքները վկայում են, որ Հայաստանի
Հանրապետությունում հանցագործությունների
նվազեցումն ենթադրվում է դիտարկել որպես պրո-
բացիայի ծառայության հիմնական նպատակ՝
ածանցյալ նշանակություն վերապահելով հանցա-
գործություն կատարած անձանց սոցիալական վե-
րահնուտեգրմանը:

Տարաբնույթ նման ընկալումներից խուսափե-
լու նպատակով անհրաժեշտ է փաստել, որ ազա-
տագրվումը ապացուցել է արդեն իսկ իր անարդյու-
նավետությունը հատկապես հանցագործություն
կատարած անձանց վերասոցիալականացման ու
նոր հանցագործություններ կատարելու կանխման
տեսանկյունից³:

Այդ առումով ազատագրվումը, որպես պատիժ,
այլընտրանքային պատժատեսակով փոխարինելը
և դրանով պայմանավորված՝ հանցագործություն
կատարած անձանց սոցիալական վերահնուտեգրու-
մը որպես պրոբացիայի ծառայության հիմնական
նպատակ դիտարկելն ինքնին հիմնավոր են
հետևյալ նկատառումներով.

առաջին, ազատագրվումն բոլոր դեպքերում
ուղղեկցվում է հանցագործություն կատարած ան-
ձի սոցիալական վարքագծի այնպիսի կարևոր
տարրերի զրկմամբ, ինչպիսիք են սոցիալական հմ-
տություններն ու ունակությունները, որոնց փոխա-
րեն նա ձեռք է բերում քրեականացված ենթամշա-
կույթ՝ հակազդելով հենց անձի սոցիալական վերա-
ինտեգրմանը,

երկրորդ, պրոբացիայի ծառայության հսկողու-
թյան ներքո ազատությունից զրկելու հետ չկապ-
ված այլընտրանքային պատիժների կիրառումն
ինքնին հնարավորություն է տալիս խուսափել բա-
րոյական, ֆիզիկական և հոգեբանական արատա-
վոր երևույթներից ու դրանց բացասական
հետևանքներից, քանի որ այդ ծառայության ակ-
տիվ ներգործության պարագայում կարող են պահ-
պանվել ու զարգանալ անձի սոցիական օրինա-
պահ վարքագիծ դրսևորելու հատկանիշները և
խրախուսվել վերջինիս հասարակության մեջ աս-
տիճանական լիարժեք վերահնուտեգրումը,

երրորդ, ազատագրվման հետ չկապված
պատժամիջոցներն օժտված են որոշակի տնտե-
սական առավելություններով, որոնց կիրառումը
հնարավորություն է ընձեռում նվազեցնել քրեակա-
տարողական հիմնարկներում ազատագրվածնե-
րի թիվը և ավելի հասցեական օգտագործել պետու-
թյան կողմից անհրաժեշտ միջոցները քաղաքացի-
ներին օգնություն ցուցաբերելու և պետության ու
հասարակության անվտանգությունն ապահովելու

նպատակով:

Ինչ վերաբերում է պրոբացիայի ծառայության
խնդիրներին, ապա անհրաժեշտ է դրանք վե-
րաձևակերպել՝ ելնելով այդ ծառայության այն
առաջադրանքներից ու գործառույթներից, որոնց
իրականացումը կհանգեցնի արդեն իսկ նա-
խանշված նպատակների իրականացմանը: Հայե-
ցակարգով այդպիսի խնդիրներ են նախատեսվում
ազատությունից զրկելու հետ չկապված պատիժ-
ներ կատարելը, քրեակատարողական հիմնարկնե-
րի բեռնաթափելը, հանցանք կատարած անձի վե-
րասոցիալականացնելը, հանցանք կատարած ան-
ձի կողմից նոր հանցագործությունների կատար-
ման հավանականությունը նվազեցնելու միջոցով
հասարակության անվտանգության ապահովելը,
ինչպես նաև խափանման միջոցի ընտրության և
պատժի նշանակման գործընթացներում առավել
տեղեկացված և անաչառ որոշումների կայացմա-
նը, դատապարտյալին պատժից պայմանական
վաղաժամկետ ազատման կամ պատժի չկրած
մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարին-
ման ներկայացման գործընթացներում առավել տե-
ղեկացված և անաչառ որոշումների կայացմանը,
հասարակությունում հանցանք կատարած անձի
ուղղմանը, սոցիալական արդարության վերա-
կանգնմանը նպաստելը:

Թերևս, տվյալ դեպքում խոսքը գնում է պրոբա-
ցիայի ծառայությանն առաջադրված այն կոնկրետ
մարտահրավերների մասին, որոնք անհրաժեշտ է
լուծել որևէ ժամանակային հատվածում՝ որոշակի
արդյունքների և վերջնական նպատակին հասնելու
համար: Իսկ դա ենթադրում է այդ ծառայության
հստակ իրավական կանոնակարգման անհրաժեշ-
տություն՝ ներառելով այն հայեցակարգային մոտե-
ցումներից մինչև համապատասխան օրենսդրա-
կան կարգավորումների ենթարկելը:

Այս առումով նախ և առաջ անհրաժեշտ է հս-
տակեցնել պրոբացիայի ծառայության կոնկրետ
գործառույթները, դրանց հետ կապված իրակա-
նացման եղանակները: Այդ կապակցությամբ մի-
ջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է,
որ Հայեցակարգի հիմքում դրված մոտեցումների
համատեքստում պրոբացիայի ծառայության գոր-
ծունեության հիմնական շրջանակը ներառում է
առնվազն հետևյալ ուղղությունները. ա) ազատու-
թյունից զրկելու հետ չկապված պատիժների և խա-
փանման միջոցների կիրառման ապահովում, բ)
հանցագործություն կատարած անձանց վերասո-
ցիալականացումն ապահովելու նպատակով սոցի-
ալական, կրթական, մշակութային, հոգեբանական
ծրագրերի իրականացում ինչպես այդ վարույթի
ողջ ընթացքում, այնպես էլ ազատությունից զրկելու
հետ չկապված պատիժը կրելու ընթացքում, գ) այ-
լընտրանքային պատիժների կամ այդ պատիժների

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

կիրառման պայմանների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացում, դ) պատիժը պայմանականորեն չկիրառելու, դատավճռի կատարման հետաձգման կամ պատժից ազատման, ինչպես նաև պայմանական վաղաժամկետ ազատման ժամանակ, ինչպես նաև այլ հիմքերով պատժից ազատված անձի նկատմամբ վերահսկողության իրականացում, ե) մեղադրյալի և տուժողի հաշտեցման (մեղիացիա) իրականացում, գ) հանրային աշխատանքների կազմակերպում և դրանց նկատմամբ վերահսկողության իրականացում, է) դատապարտյալների վարքագծի գնահատում և պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ առաջարկությունների կամ ներման հարցերով այլ խորհրդատվական զեկույցների ներկայացում, ը) պատժից պայմանական վաղաժամկետ ազատված անձանց օժանդակության տրամադրում, թ) ակտիվումությունից կամ թմրամոլությունից բուժման կարիք ունեցող անձանց համար ոչ հարկադիր բուժման ծրագրերի կամ այլ տեսակի հանցագործություն կատարած անձանց համար նախատեսվող վերականգնողական ծրագրերի կամ կրթական, մշակութային, սոցիալ-հոգեբանական հատուկ միջոցառումների իրականացում⁴ :

Սակայն, անհրաժեշտ է հաշվի առնել, որ պրոբացիայի ծառայության համար առաջնայինը պրոբացիայի ենթակա և պրոբացիային առնչվող անձանց իրավունքների ու ազատությունների արդյունավետ իրացումն է ու դրանց պաշտպանության երաշխավորումը, այլ ոչ թե՛ պետությանը վերապահված լիազորությունների իրականացումը:

Եվ այդ իմաստով, կարծում ենք, որ պրոբացիայի ծառայության գործունեության հիմնական շրջանակը, ինչպես այդ գործունեության ոլորտների նշանակությամբ, այնպես էլ բովանդակային առումով պետք է ևս լրացվեն հանցագործությունից տուժած անձանց ու վկաների նկատմամբ սոցիալ-վերականգնողական գործունեության իրականացման, այնպես էլ մեղադրյալի ու տուժողի հաշտեցման գործընթացի կազմակերպման, այնուհետև այդ գործընթացի իրականացման ուղղություններով :

Պրոբացիայի ծառայության գործունեության ուղղությունների տրամաբանական այսպիսի կառուցվածքի ապահովումն ենթադրում է ոչ միայն պրոբացիայի արդյունավետության երաշխավորում, այլև պրոբացիայի ծառայողի և պրոբացիայի ենթակա ու առնչվող անձանց սերտ փոխադարձ կապի ու գործակցության առկայություն: Իսկ այդպիսի մոտեցումը հնարավորություն կտա երաշխավորել հանցագործություն կատարած անձանց սոցիալական արդյունավետ վերաինտեգրումը և, որ-

պես վերջինիս հետևանք, նաև հանցագործությունների նվազումը, ինչպես նաև հանցագործությունից տուժած կամ հանցագործության հետ առնչություն ունեցող այլ անձանց իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունը:

Հայեցակարգի հաջորդ կարևոր և առանցքային հարցադրումներից է պրոբացիայի ծառայությանը ներկայացվող պահանջների ու այդ ծառայության իրավական կարգավիճակի սահմանումն է: Անհրաժեշտ է նկատել, որ միջազգային և արտասահմանյան երկրների օրենսդրությունը վերլուծելիս աներկբայորեն հանգում ենք այն եզրահանգման, որ ցանկացած պետական մարմնի համար կարևոր խնդիր ու պահանջ է դիտարկվում տվյալ պետական մարմնի իրավական կարգավիճակի հստակ սահմանումը, քանզի հենց պետական մարմնի կարգավիճակի սահմանմամբ է հնարավոր պարզել նրա գործունեության շրջանների առանձնահատկությունները: Այդ պատճառով չափազանց կարևոր է, որ միջազգային լավագույն փորձի հաշվառմամբ հնարավոր լինի սահմանել պրոբացիայի ծառայության իրավական կարգավիճակի հիմնախնդիրները, որոնք ենթադրում են. ա) պետական և հանրային կյանքի այն ոլորտների մատնանշումը, որոնց դեպքում և շրջանակներում իրականացվում է պրոբացիայի գործունեությունը, բ) պրոբացիայի ծառայության կազմակերպման, գործունեության կարգն ու երաշխիքները սահմանող օրենսդրության ձևավորումը, գ) պրոբացիայի ծառայության մարմնի լիազորությունների և գործառույթների հստակ մատնանշումը և սահմանումը, դ) պրոբացիայի ծառայության գործունեության ոլորտի և առանձնահատկությունների սահմանումը, ե) պրոբացիայի ծառայության և այլ պետական մարմինների միջև փոխհարաբերությունների իրավական կարգավորումը, զ) պրոբացիայի ծառայության խնդիրների սահմանումը, է) պրոբացիայի ծառայության գործունեության օբյեկտների և սուբյեկտների սահմանումը և այլ գործոններ, որոնք կարևոր նշանակություն ունեն պրոբացիայի ծառայության անխափան և արդյունավետ գործունեության համար:

Հաշվի առնելով այդ ոլորտում միջազգային փորձը, Հայեցակարգով նախատեսվում է ստեղծել պրոբացիայի պետական ծառայություն Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության համակարգում՝ քրեակատարողական ծառայությունից անկախ և առանձին:

Ընդ որում, հայեցակարգային նման մոտեցումը պայմանավորված է եղել մի շարք այնպիսի հիմնավորումներով, ինչպիսին են՝ ռեսուրսների արդյունավետ ու նպատակային օգտագործումը, պրոբացիայի ժամանակակից մոտեցումների ու սկզբունքների ներդրման երաշխավորումը, պայմանա-

կան վաղաժամկետ ազատման ու պատժի չկրած մասի ավելի մեղմ պատժատեսակով փոխարինման համակարգերի շարունակական բարեփոխումների իրականացումը, դատարանների, ոստիկանության ու քրեակատարողական ծառայության միջև առկա խոչընդոտների հաղթահարումը և այլն:

Այնուամենայնիվ, պրոբացիայի պետական ծառայության, որպես արդարադատության նախարարության համակարգի ինքնուրույն գերատեսչական մարմնի, ներկայացվող նման պահանջը բոլոր դեպքերում արդարացված է: Սակայն, այդ ծառայությանը նման կարգավիճակ սահմանելու հարցում անհրաժեշտ է հաշվի առնել, որ այն յուրահատուկ բազմաոլորտային գործունեության տեսակ է և ուղղված է հանցագործություն կատարած կամ հանցագործությունից տուժած կամ հանցագործության հետ առնչություն ունեցող այլ անձանց հետ սոցիալ-վերականգնողական միասնական գործունեության իրականացմանը:

Ի վերջո, ակնհայտ է այն, որ ազատության մեջ պատիժ կրող դատապարտյալների հետ սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների կատարումը միանշանակ դուրս է քրեակատարողական ծառայության գործառնություններից, իսկ մասնագիտական այս գործունեության յուրահատկությունն անմիջականորեն առնչվելու է ինչպես համապատասխան կադրերի պատրաստման ու վերապատրաստման, դատապարտյալների անձնային և վարքային դրսևորումների գնահատման հստակ չափորոշիչների սահմանման ու գնահատման մեխանիզմի ներդրման, կրթական ու աշխատանքային ռեսուրսների զարգացման, այնպես էլ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու ոչ պետական կազմակերպությունների հետ համագործակցության ամրագրման ու իրագործման հետ:

Միաժամանակ, այդ ծառայության արդյունավետ կառավարման կարևոր երաշխիքներից պետք է լինի միասնական ու ամբողջական կառուցվածքի առկայությունը, որով հնարավոր կլինի կազմակերպական ու ֆինանսական ռեսուրսներն ուղղել պրոբացիայի ենթակա անձանց նկատմամբ անհատական բնույթի վերահսկողական ու վերականգնողական ծրագրերի մշակմանն ու իրագործմանը: Իսկ հանցագործություն կատարած կամ հանցագործությունից տուժած կամ հանցագործության հետ առնչություն ունեցող անձանց նկատմամբ սոցիալ-վերականգնողական այդպիսի եղանակներն ու միջոցները պետք է իրագործվեն միասնական տրամաբանության շրջանակում՝ անգամ այդ աշխատանքներին ներգրավելով կամավորներին:

Այնուհետև Հայեցակարգով, վերլուծելով պրոբացիայի ծառայության կողմից այլընտրանքային պատժատեսակների կատարման հնարավորու-

թյունների շրջանակները, նախատեսվում է, որ այլընտրանքային բոլոր տեսակի պատիժների կատարումն անհրաժեշտ է վերապահել պրոբացիայի ծառայությանը, բացառությամբ գույքի բռնագրավման և հատուկ կամ զինվորական կոչումից, կարգից, աստիճանից կամ որակավորման դասից զրկելու դեպքերի, եթե դրանց հետ որպես հիմնական պատիժ է նշանակվել ազատազրկումը, որոնց կատարումը պետք է ապահովի համապատասխան պետական մարմինը:

Ինչ վերաբերում է պրոբացիայի ծառայության կողմից իր առջև դրված խնդիրներն իրականացնելու նպատակով այլ պետական մարմինների հետ համագործակցության խնդրին, ապա Հայեցակարգով նշվում է նվազագույնը այն մարմինների ցանկից, որոնց հետ համագործակցելը դիտարկվում է պրոբացիայի ծառայության կարևոր մաս: Դրանք են՝ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության, Հայաստանի Հանրապետության առողջապահության, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի, Հայաստանի Հանրապետության մշակույթի, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունները, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինները, սոցիալական ծառայությունները, վերականգնողական կենտրոնները, խնամատար հաստատությունները, զբաղվածության գործակալությունները և կրթական հաստատությունները:

Ամբողջականացնելով պրոբացիայի ծառայության լիազորությունների և գործառնությունների շրջանակը և հաշվի առնելով տարբեր երկրներում պրոբացիայի ծառայության գործառնությունների համեմատական իրավական վերլուծության արդյունքները՝ Հայեցակարգով նախատեսվում է պրոբացիայի իրականացման մինչդատական, դատական, պենիտենցիար և հետպենիտենցիար փուլերի առկայությունը: Ընդ որում, եթե մինչդատական փուլում նախատեսվում է պրոբացիայի ծառայության այնպիսի գործառնություններ, ինչպիսին են՝ խափանման միջոցի ընտրության նպատակով մինչդատական զեկույցի պատրաստում և այլընտրանքային խափանման միջոցներից տնային կալանքի և վարչական հսկողության իրականացում, օրենսդրությամբ նախատեսված լինելու դեպքում՝ մեղիացիա, կամ դատական փուլում, մինչև պատժի նշանակելը խափանման միջոցի ընտրության կամ պատժի ընտրության վերաբերյալ զեկույցի տրամադրում և օրենսդրությամբ նախատեսված լինելու դեպքում՝ մեղիացիա, իսկ պենիտենցիար փուլում՝ այլընտրանքային պատիժների կատարում, պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքում փորձաշրջանի կազմակերպում և իրականացում, վերականգնողական աշխատանքների կատարում,

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

պատժից ազատված անձի վարքի կամ պատիժը հետաձգված անձանց նկատմամբ վերահսկողության իրականացում, ազատագրված տեսքով պատժի կրման ընթացքում պատժի անհատական պլանավորմանն աջակցություն, դատապարտյալի վարքի պարբերական գնահատում և այլն, ապա հետպեհիտենցիար փուլում նախատեսվում է դատվածությունը հանելու առնչությամբ դատարանին զեկույցի ներկայացման և իրավական օժանդակության ու անձի վերասոցիալականացման գործառույթներ:

Պրոբացիայի ծառայության մասն փուլային իրականացման մասով խնդրահարույց են պրոբացիայի ծառայողների արդյունավետ օգտագործման և նյութատեխնիկական ռեսուրսների նպատակային բաշխման հարցերը: Նախ, բոլոր չորս փուլերում անհրաժեշտ է սահմանել պրոբացիայի ծառայողների իրավունքներն ու պարտականությունները: Նման իրավակարգավորման անհրաժեշտությունը պայմանավորված է այդ իրավունքների ու պարտականությունների համապարփակ ու ամբողջական սահմանմամբ և դրանց հստակ ու առանց երկիմաստ ձևակերպումների կանոնակարգմամբ:

Այսպես, մինչդատական և դատական փուլերում ներգրավված պրոբացիայի ծառայողները ողջ գործընթացում, անձնական պատասխանավորությամբ, դատավարական գործընթացի բոլոր մասնակիցներին ապահովում են հավաստի տեղեկատվությամբ կամ մատուցում են անհրաժեշտ խորհրդատվությամբ:

Ակնհայտ է, որ պեհիտենցիար փուլում պրոբացիայի ծառայության գործառույթները բազմաբնույթ են: Նման դեպքերում և՛ ժամանակային, և՛ այլ գործոնների առումով մտահոգության տեղիք կարող է տալ այնպիսի գործառույթների միաժամանակյա համատեղումը, ինչպիսին են այլընտրանքային պատիժների կատարումը, պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքում փորձաշրջանի կազմակերպումն ու իրականացումը, վերականգնողական աշխատանքների կատարումը, պատժից ազատված անձի վարքի կամ պատիժը հետաձգված անձանց նկատմամբ վերահսկողության իրականացումը, դատապարտյալի վարքի պարբերական գնահատումը և այլն: Հարկ է նկատել, որ միայն, օրինակ, դատապարտյալի վարքի պարբերական գնահատման մասով անհրաժեշտ է գնահատել նաև կրկնահանգագործության ռիսկը, դատապարտյալի մասով կատարված սոցիալական, հոգեբանական, իրավական աշխատանքների արդյունավետությունը կամ նրա կողմից ակտիվության կամ թնրանյութերից կախվածության վիճակը և այլն:

Միջազգային փորձով սահմանված մոտեցում-

ների համաձայն պրոբացիայի ծառայողներն իրենց գործառույթներն իրականացնելիս զեկույցի տեսքով տեղեկություն են ներկայացնում դատարաններին: Այդ զեկույցները պետք է բխեն ինչպես հանցանք կատարելու մեջ կասկածվող անձի, այնպես էլ տուժողի շահերից: Նման զեկույցները, ըստ էության, տվյալներ են պարունակում անձի վարքագծի, դրա փոփոխման հավանականության, հանցավոր անցյալի, անձնական հարաբերությունների, զբաղվածության, մասնագիտության և այլնի վերաբերյալ, ինչը կարող է որոշակի դերակատարություն ունենալ դատարանի կողմից որոշում կայացնելիս: Այդ իսկ պատճառով զեկույցները պետք է բովանդակեն իրականության օբյեկտիվությունն ու անկողմնակալությունն արտացոլող պայմաններ և պահանջներ, ինչպես նաև դրանցում ներկայացվեն նաև երաշխավորագիր կամ առաջարկություն խափանման միջոցի կամ պատժի առավել արդյունավետ ընտրության վերաբերյալ:

Այսպես, Հայեցակարգի 2-րդ գլխի 2-րդ կետով, դատարանի պահանջով միջդատական զեկույց ներկայացնելու վերաբերյալ դրույթի մասով նախ նախատեսվում է, որ միջդատական զեկույցը պետք է տրամադրվի այն քրեական գործերով, որոնց դեպքում վարույթն իրականացնող մարմինը պատրաստվում է դիմել դատարան՝ կալանավորումը որպես խափանման միջոց նշանակելու միջոցառությամբ: Այնուհետ նշվում է, որ այդպիսի զեկույց տրվում է դատարանի պահանջով: Ստացվում է, որ եթե որևէ գործով դատարանը զեկույց չպահանջի, ապա վարույթն իրականացնող մարմինը մինչդատական զեկույց ներկայացնելու պարտավորություն չի կրի և արդեն կալանավորման հարցը կորոշվի գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:

Բացի այդ, լուրջ իրավական կանոնակարգման անհրաժեշտություն ունի, թե՛ վարույթն իրականացնող անձի, և թե՛ դատարանի և թե՛ փաստաբանի կողմից, մի կողմից, զեկույցի ներկայացման ներկայացնելու պահանջ, մյուս կողմից էլ, դատարանից ակնկալելու հանցագործություն կատարած անձի (եթե տվյալ արարքի կամ անձի պարագայում նախատեսված է պայմանական դատապարտման կամ պատժի կատարման հետաձգում) նկատմամբ կիրառելու ազատագրկողմից տարբերվող այլընտրանքային միջոց: Ընդ որում, այս խնդիրները հստակ իրավական կարգավորման կարիք ունեն, քանի որ ուղղակիորեն ևս առնչվում են մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության հետ:

Խնդիրն առավել քան հիմնավորվում է թե՛ միջազգային փորձով, և թե՛ այն հանգամանքով, որ պրոբացիայի ծառայության կենտրոնական գործառույթներից է հենց զեկույցների ներկայացումը,

www.journal.lawinstitute.am

որոնք ուղղված կլինեն դատարանների կողմից ճիշտ որոշումներ կայացնելուն:

Խոսքն այս պարագայում վերաբերում է, մասնավորապես, կալանքի որոշումներին, որոնց նվազման հավանականությունը կապված է մանրակրկիտ և արդյունավետ տեղեկություն պարունակող մինչդատական գեկույցի հետ, որով հնարավոր է դառնում առաջարկել ազատագրկման ձևով խափանման միջոցին այլընտրանք: Թերևս, այդ առումով կարևոր առանձնահատկությունն այն է, որ մարդուն ազատությունից զրկելուն վերաբերող դատարանի որոշումները լինեն օբյեկտիվ և բազմակողմանի հիմնավորված՝ հաշվի առնելով, որ պետության ժողովրդավարության աստիճանը և մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանության մակարդակը հենց ուղիղ համեմատական են տվյալ երկրում գործող դատական համակարգի բովանդակության հետ:

Հայաստանի Հանրապետությունում ներդրվող պրոբացիայի ծառայության կարևոր հիմնախնդիրներից է դրա ամբողջական իրավական կարգավորման անհրաժեշտությունը: Ըստ Հայեցակարգի՝ նման ինստիտուտի ներդրումը կպահանջի ընդունել «Պրոբացիայի մասին» կամ «Պրոբացիայի ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, ինչպես նաև կատարել համապատասխան փոփոխություններ ու լրացումներ Հայաստանի Հանրապետության քրեական, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության և Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքերում:

Ընդ որում, «Պրոբացիայի մասին» կամ «Պրոբացիայի ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսվում է սահմանել պրոբացիայի հասկացությունը, տեսակները, սկզբունքները, ծառայության խնդիրները, գործունեության սկզբունքները, լիազորությունները, կառուցվածքը, պրոբացիայի ծառայության ծառայողի իրավական և սոցիալական ապահովման պետական երաշխիքները, նյութատեխնիկական ապահովման, ֆինանսավորման և գործունեության վերահսկման կարգը, ինչպես նաև կարգավորել դրանց հետ առնչվող այլ իրավահարաբերություններ:

Ավելին, հաշվի առնելով այն հանգամանքը, որ պրոբացիայի ծառայության առանձին գործառնություններ հնարավոր է իրականացնել ոչ պետական կազմակերպությունների հետ, ապա նման գործառնությունների իրականացման նախատեսումն ինքնին ենթադրում է իրավական հստակ կարգավորման անհրաժեշտություն:

Նախ, անհրաժեշտ է նշել, որ պրոբացիայի առավելագույնս հստակ սահմանման ու դրա իրացման երաշխիքները և պետության պարտավորու-

թյունները պետք է բխեն առնվազն սահմանադրական իրավունքի նորմերի բովանդակությունից, լինեն համաչափ, չաղավաղեն իրավունքի արդյունավետ իրացման սահմաններն ու իմաստը, և զուգակցվեն հանրային իշխանության համարժեք պարտականություններով:

Այդ առումով, կարծում ենք, որ սահմանադրական բարեփոխումների համատեքստում անհրաժեշտ է քննարկել սահմանադրական մակարդակում պրոբացիայի հաստատման համար անհրաժեշտ և բավարար նախադրյալներ ամրագրելու ու երաշխավորելու մասին հարցը: Մասնավորապես, կարծում ենք, որ ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածն անհրաժեշտ է լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր, 5-րդ պարբերությունով. «Յուրաքանչյուր ոք իրավունք ունի օրենքով սահմանված հիմքերով և կարգով ազատությունից զրկման հետ չկապված այլընտրանքային պատիժ կրելու խնդրով դիմելու դատական և պետական այլ մարմիններին»:

Սահմանադրական նման նորմի ամրագրման անհրաժեշտությունը պայմանավորված է այն հիմնավորմամբ, որ Սահմանադրության 16-րդ հոդվածով հռչակված դրույթների համադրված վերլուծությունից չի բխում ազատությունից զրկման հետ չկապված այլընտրանքային պատիժներ կիրառելու որևէ հնարավորություն:

Բացի դրանից, անհրաժեշտ է նկատել, որ պրոբացիան, որպես այլընտրանքային պատժի ինստիտուտ, և պրոբացիայի ծառայությունը, որպես հանրային ծառայության տեսակ, բովանդակում են գրեթե տարբեր ոլորտի իրավահարաբերություններ, որոնց իրավական կարգավորումը մեկ՝ «Պրոբացիայի մասին» կամ «Պրոբացիայի ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով այնքան էլ տեղին չէ այն հիմնավորմամբ, որ դրանցից յուրաքանչյուրի կարգավորման առարկան չի համապատասխանում մյուսի կարգավորման առարկային:

Հետևաբար, պրոբացիայի ինստիտուտի և պրոբացիայի ծառայության ներդրումն ենթադրում է առանձին օրենքների («Պրոբացիայի մասին» և «Պրոբացիայի ծառայության մասին»), կամ Պրոբացիայի մասին Հայաստանի Հանրապետության օրենսգրքի ընդունում՝ համապատասխան փոփոխություններ ու լրացումներ կատարելով Հայաստանի Հանրապետության քրեական, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության և Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքերում, ինչպես նաև «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում:

Ընդ որում, մեկ միասնական կողմի ֆիկացված ակտի՝ Պրոբացիայի մասին Հայաստանի Հանրա-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

պետության օրենսգրքի ընդունումը կապահովի պրոբացիայի և պրոբացիայի ծառայության սահմանման հստակությունն ու համալիրությունը:

Այսպիսով, Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հավանության արժանացած պրոբացիոն ծառայության ներդրման հայեցակարգով ամրագրված մոտեցումների համակարգային վերլուծությունից հետևում է, որ ներկայումս առավել քան հրատապ են դարձել և օրենսդրական լուծումների մակարդակում սկզբունքային նոր մոտեցումներ են պահանջում ազատությունից զրկման հետ չկապված այլընտրանքային պատիժների կիրառման հնարավորությունն ու մեխանիզմները:

Հայեցակարգի տրամաբանությամբ Հայաստանի Հանրապետությունում պրոբացիայի ծառայության ներդրման հիմքում ընկած են քրեական արդարադատության ոլորտում եվրոպական իրավական միասնական չափորոշիչները, իսկ իրականացվող իրավական այդ բարեփոխումները ենթադրում են ազատագրված ավանդական գաղափարախոսությունից անցում վերասոցիալականացման և վերականգնողական արդարադատությանը, հետևաբար, այդ գործընթացի պետական կառավարման իրականացման անհրաժեշտությունը՝ պրոբացիայի համապատասխան ծառայության ներգրավմամբ:

Պրոբացիայի մասին եվրոպական կանոնների և Հայեցակարգային դրույթների համադրված վերլուծությունից հետևում է, որ անհրաժեշտ է վերանայել պրոբացիայի ծառայության նպատակի վերաբերյալ հաստատված հայեցակարգային մոտեցումները, և հանցագործություն կատարած անձանց սոցիալական վերահիմնագրումը դիտարկել

առաջնային նպատակ, իսկ հանցագործությունների նվազումը՝ որպես այդ նպատակի հետևանք:

Այնուհայտ է, որ պրոբացիայի պետական ծառայության, որպես արդարադատության նախարարության համակարգի ինքնուրույն գերատեսչական մարմնին ներկայացվող հայեցակարգային պահանջը արդարացված է, սակայն, այդ ծառայությանը նման կարգավիճակ սահմանելու հարցում անհրաժեշտ է հաշվի առնել, որ այն յուրահատուկ բազմաոլորտային գործունեության տեսակ է և ուղղված է հանցագործություն կատարած կամ հանցագործությունից տուժած կամ հանցագործության հետ առնչություն ունեցող այլ անձանց հետ սոցիալ-վերականգնողական միասնական գործունեության իրականացմանը:

Այնուհետև, մեթոդաբանական առումով անհրաժեշտ է այդ ինստիտուտի հաստատման համար անհրաժեշտ և բավարար նախադրյալներ ամրագրել ու երաշխավորել սահմանադրական և օրենսդրական մակարդակներում:

Վերջապես, համակարգային ամբողջականության մեջ անհրաժեշտ է երաշխավորել պրոբացիայի ինստիտուտի և պրոբացիայի ծառայության լիարժեք ներդրում Հայաստանի Հանրապետության քրեական, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության և Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքերում, ինչպես նաև «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում համապատասխան փոփոխություններ ու լրացումներ կատարելու միջոցով:

¹ UN Office on Drugs and Crime, Handbook on Restorative Justice Programmes // Restorative Justice: Oxford Bibliographies Online Research Guide. Oxford University Press, USA, 2010. 26 p.

² Recommendation CM/Rec(2010)1 of the Committee of Ministers to member states on the Council of Europe Probation Rules և այլ փաստաթղթեր: Տե՛ս Сборник документов Совета Европы. М.: 2011:

³ Садьков А.У. Перспективы института probation в Российской Федерации // Общество и право, Ставрополь, 2011, 3(35), С. 218.

⁴ Տե՛ս նաև Հայեցակարգի 2-րդ գլխի 1-ին կետը:

⁵ Պրոֆեսոր Ա.Սադիկովը պրոբացիայի գործունեության ոլորտները դասակարգում է հետևյալ խմբերի. 1) սոցիալ-վերականգնողական և վերահսկողական գործունեության իրականացում պայմանական դատապարտված անձանց նկատմամբ; 2) սոցիալ-վերականգնողական և վերահսկողական գործունեության իրականացում պայմանական և վաղաժամկետ ազատված անձանց նկատմամբ; 3) դատարանին՝ քննչական մարմիններից անկախ՝ անձանց սոցիալական վտանգավորության վերաբերյալ գեկույցի ներկայացում; 4) մեղադրյալի և տուժողի հաշտեցման գործընթացի կազմակերպում; 5) սոցիալ-վերականգնողական գործունեության իրականացում հանցագործությունից տուժած անձանց նկատմամբ; 6) սոցիալ-վերականգնողական գործունեության իրականացում վկաների նկատմամբ:

Տե՛ս Садыков А.У. Նույն աշխ. մեջ, էջ 220:

⁶ Մասնագիտական գրականության մեջ շրջանառվում է այդ փուլերի առաջնահերթության կամ գերակայության հարցը: Մասնագետների մի մասը գտնում է, որ սկզբնական շրջանում մինչդատական փուլը պետք է դուրս մնա և առաջնահերթությունը պետք է վերապահել պենիտենցիար ու հետպենիտենցիար փուլերին՝ կարևորելով պայմանական վաղաժամկետ ազատման ու անձին ազատության նախապատրաստելու հարցը: Այս խմբի կողմից նշվել է նաև, որ եթե մինչդատական փուլում պրոբացիա կիրառվի, ապա այն, հնարավոր է դատարանի համար կաշկանդող դառնա և արդյունավետ չլինի:

Ի տարբերություն հիշատակված մոտեցման, մասնագետների մեկ այլ խումբ գտնում է, որ հենց մինչդատական փուլից պետք է սկսել պրոբացիայի ծառայությունը՝ կալանքի հարցի լուծման ժամանակ դատարաններին օգնելու և ավելի արդյունավետ խափանման միջոց ընտրելու նպատակով: Նշվել է նաև, որ եթե պենիտենցիար փուլում պրոբացիա կիրառվի և այն կապվի պայմանական վաղաժամկետ ազատման հետ, կոռուպցիոն ռիսկերը մեծ կլինեն և կրկին այդ ծառայության արդյունավետությունը կնվազի: Բոլոր դեպքերում, սակայն, չնայած տարբեր մասնագիտական և փորձագիտական գնահատականների, օրեցօր ավելի ու ավելի շատ երկրներ ընդլայնում են պրոբացիայի ծավալները բոլոր չորս փուլերում:

Առանձին երկրներում պրոբացիայի ծառայության փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մեկ ընդհանուր և բոլորի կողմից ընդունված մոդել գոյություն չունի: Սակայն, կան պրոբացիայի ծառայության մի քանի մոդելներ, որոնք որոշ առանձնահատկություններով հնարավոր է հանդիպել մեկից ավելի երկրների իրավական համակարգերում:

Այսպես, ինչպես արդեն ներկայացվել է, պրոբացիայի ծառայությունը հիմնականում գործում է կամ գործադիր, կամ դատական իշխանության ներքո: Սրանով պայմանավորված՝ ծառայության կողմից իրականացվող գործառնությունները կարող են տարբեր լինել: Այն երկրները, որտեղ պրոբացիայի ծառայությունը գործում է քրեակատարողական համակարգի ներսում, պրոբացիայի ծառայությունները հիմնականում իրականացվում են երբեմն պատժի կրման դատական փուլերում, այսինքն, մինչդատական փուլում և ազատվելուց հետո պրոբացիայի ծառայությունը ավելի պասիվ վիճակում է գտնվում: Նման մոդել գործում է, օրինակ Ֆրանսիայում, որն ի դեպ արդեն իսկ ձեռնամուխ է եղել նոր օրենսդրական փոփոխությունների՝ նպատակ ունենալով ընդլայնել արակտիկայի կիրառման և գործընթացի մեջ ներթափանցման շրջանակները: Տե՛ս Голодов П.В. Зарубежный опыт и перспективы создания службы пробации в России: организационно-правовые аспекты // Вестник института. Научно-практический журнал Вологодского института права и экономики ФСИН. Преступление. Наказание. Исправление. - Вологда: 2011, N 2(14). С. 81-88; Шатанкова Е.Н. Условное осуждение и пробация зарубежом (сравнительно-правовой анализ): Автореф. дис. ... канд. юрид. наук. М., 2008. С. 13-14; Антонян Е.Н. Наказания, не связанные с лишением свободы: правовая природа, назначение и исполнение. Рязань, 2005; Alexander P., Staub H. The Criminal, the Judge and the Public. N.Y. 1979, 345 էջ և ուրիշներ:

Ваан Багдасарян

Аспирант юридического факультета
Европейской Региональной Академии

РЕЗЮМЕ

Концептуальные подходы внедрения пробационной службы в Республике Армения.

Статья посвящена введению в Республике Армения пробационной службы, концептуальные подходы, государственно- правовое и социально - политическое значение, а также его эффективность в качестве альтернативного наказания. Испытательный срок и стажировки в области прав и свобод физических лиц, а также пробационный сервис в правовой системе Республики Армения.

Ключевые слова: пробация, сотрудники службы пробации, пробационная служба, правовой статус.

Vahan Baghdasaryan

Graduate Student of law department
in European Regional Academy

SUMMARY

Conceptual approaches of Probation service insertion in the republic of Armenia

The article is dedicated to the introduction of the probation service in the Republic of Armenia, its conceptual approaches, public - legal and socio- political significance as well as its effectiveness as an alternative punishment. Probation relating to individuals' rights and freedoms, as well as the legal system of the Republic of Armenia in comparison.

Keywords : probation, probation officers, probation service, legal status , probation -related entities.